


1	2	3	4	5
11(1603)	FG: 5749—5750	Վարդենիս < Դիաղին Մարտունի < Մուշ	1974	Կարինե Բարսեղյան Սուխեր Հովհաննիսյան
12(1603)	FG: 5755—5756		1976	
բ. 1(1604)— 52(1654)	FG: 5703—5706, 5713—5720	— 3 —	— 3 —	— 3 —
դ. 1(1655)— 18(1672)	FG: 5733—5736, 5669—5702	— 3 —	— 3 —	— 3 —

ԲԱՆԱՍԱՑՆԵՐԻ ԿՆՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Կարինե Ասատուրի Բարսեղյան—ծնվել է 1905 թ. Բասարզևյարում (ներկայումս՝ Վարդենիս), արհեստավորի ընտանիքում: Նախնիները Արևմտյան Հայաստանի Դիաղին գյուղաքաղաքից են, զաղթել են 1828 թ.: Ասացողն օժաված է լավ հիշողությամբ և զեղեցիկ ձայնով, պամում և երգում է իր նախնիներից լսած հեքիաթներն ու երգերը: Նա մեղ հաղորդել է նաև բազմաթիվ բանահյուսական մանր ժանրի ստեղծագործություններ՝ առած-ասացվածքներ, հանելուկներ, զարձվածքներ, ինչպես նաև աղագրական արժեք ներկայացնող որոշ նյութեր՝ Ալաշկերտի, Դիաղինի հարսանիք, ծննդյան և մահվան ծեսերին վերաբերող արժեքավոր տեղեկություններ և այլն:



Բարսեղ (Բասո) Մնացականի Բարսեղյան—ծնվել է 1903 թ. Բասարզևյարում, չքավոր գյուղացու ընտանիքում: Նախնիները յաղթել են Դիաղինի զավառից: Մասնակցել է Հայրենական պատերազմին, վիրավորվել: Վերագործել է և մինչև կյանքի վերջը (1973 թ. հոկտեմբեր) ապրել և աշխատել է Բասարզևյարում: Երջանի ճանաչված և սիրված հեքիաթասացն էր և համընդհանուր հարդանք էր վայելում: Գյուղի բնակիչները ոչ միայն հավաքվում էին նրա մոտ, այլև հրավիրում էին նրան իրենց օգաները լսելու վարպետ հեքիաթասացին: Նա փայլում էր, նախ, բազմաքանակ նյութի իմացությամբ և ապա ավանդական վիպասացի մեծ շնորհքով:



Հալկադ Մկրտչյան—ծնվել է 1903 թ. Մարտունիում: Եւմ պապեր դադթած ա Մանկասար դլուդից, Ասսունա ծր-  
 սերր լսած եմ Եղոյ Արշակից հլա էրեխա ժամանակ, սով-  
 րած եմ էնորից ու Լա էլ սեսել Լմ պամենլա: Այս վիպա-  
 սացը մեղ հաղորդել է նաե այլ ընուլթի արժեքավոր բանա-  
 շլուսական նլութեր:



Հովհաննէս Սահրադի Վրթոյան—ծնվել է 1903 թ. Մար-  
 սունիում: Նախնիները Ալաշկերտի Բաթնոս գլուդից Լնս Ինչ-  
 պես իներ է վկայում, աէս բոլոր պատմութեններ լսած եմ  
 մեր բոբերուց, իմ պաղուց, էնի հլա Բաթնոս հնլած ժամա-  
 նակ, կըսին, կպատմեր Ասսնա ծոերի պատմութենա: Օժտված  
 լինելով պատմելու, հաղորդելու հանգարա ու վիպական ո-  
 սով, համազլուդացիները նրան սուսաս դանդադա էին կո-  
 շում: Հաակուպէս համազլուդացի Հալկադ Մկրտչյանի հետ  
 համատեղ Լա գսնեղ և դեղեցիկ պատմում էր սԱսսնա ծը-  
 ոերը: Նա իր մահկանացուն կնքեց 75 տարեկան հասա-  
 կում:



Մարուայա Երվանդի ՄԼթոնյան—ծնվել է 1910 թ. Ներ-  
 քին Ղարանլուդում: Նախնիները դադթել են 1928—29թթ.  
 Ալաշկերտից: Աշխատել է բանվոր, բուժքույր և բրիգադիր,  
 այժմ թոշակաուու է: Մեր հարցին, թե սումից է լսել մեր  
 ժողովրդական վեդր, նա պատասխանեց. «Ասսնա ծոերը  
 սովորել եմ անդրադետ հորիցս, նա էլ լսել է յուր պապե-  
 րից...»:



Գեղամ Մավչութի Ավետիսյան—ծնվել է Մարառուհում 1880 թ. շքավոր հողատեր գյուղացու ընտանիքում, վաղ հասակում զբիվելով տեսողությունից, գտնում է ավելի ինքնամփոփ ու խորախորհուրդ։ Նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի գավառի Մանգասար գյուղից։ Ասացողն օժաված էր գեղեցիկ ձայնով, լավ հիշողությամբ, պատմելու վիսյական ավանդական ոճով։ Գեղամ Ավետիսյանից զրի են առնված ռազմաթիվ հեքիաթներ, «Վաթսունիսնգ խեքիաթ գինամ,—ասում էր ըրանասացը,—մեկը մեկու շիրկնա...» և իրավամբ նրա հաղորդած նյութերը, լինեն զրանք հեքիաթ կամ զրույց, վեպ թե առակ, աչքի են ընկնում իրենց ընգզված ավանդականությամբ և նաշունչ ոգով։

Շնորհաշատ ըրանասացն իր մահկանացուն կնքեց 1978 թ.։



Շուշիկ Գեղամի Ավետիսյան—ծնվել է Մարառուհում 1912 թ.։ Նախնիները Արևմտյան Հայաստանի Ալաշկերտ գավառի Մանգասար գյուղի վերարնակիչներ են։ Պատմելու և երգելու շնորհքը ժառանգել է իր ռազմաշնորհ հորից՝ Գեղամ Ավետիսյանից, որի ձայնակցությամբ հաճախ երգում էր ժողովրդական երգեր, խաղիկներ (շան-գյուլումներ)։



Սուրբեր Ավետիսի Հովհաննիսյան—ծնվել է Մարառուհու շրջանի Վերին Ղարանլուղ (այժմ՝ Գեղհովիտ) գյուղում 1910 թ., հողագործի ընտանիքում։ Որը մանկությունը և լարթաշ կյանքը իրենց կնիքն էին զրել այս ասացողի երդացանկի վրա. երգում էր թախտալի երգեր, խաղիկներ։ Անձ ոգևորությամբ և սիրով էր հաղորդում իմացած հնագույն նյութը։ Նախնիները արևմտյան Հայաստանի Մուշ գավառից են։